Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Փշատավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Պատմություն» (15 դասաժամ), «Մաթեմատիկա» (10 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն» (7 դասաժամ), «Կերպարվեստ» (6 դասաժամ), «Շախմատ» (6 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2024թ.-ի սեպտեմբերի 4-ից մինչև 18-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. սեպտեմբերի 23-ին՝ ժամը 15:00-ին («Հայոց լեզու և գրականություն», «Կերպարվեստ», «Շախմատ»)** և **սեպտեմբերի 24-ին՝ ժամը 15:00-ին («Պատմություն», «Մաթեմատիկա»)** «Փշատավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝Արմավիրի մարզ գ.Փշատավան 17փողոց 33շենք: Տեղեկությունների համար զանգահարել 093-62-32-93 հեռախոսահամարով: